

ըլքող ու ղղուելի է դառնում: Այն մարդը, որ սահմուած է ամբողջ օրը մի և նոյն տեղում աշխատել, իրան թարմացած ու աւելի առողջ է զգում, երբ տեղը փոխաւմ է, ուրիշ օդ է շընչում, իւր շնորջն ուրիշ առարկաներ է տեսնում: Բանապահուածների վիճակը հենց այն պատճառով է դժվարութապէս անտանելի, որ ստիպուած են միշտ մի և նոյն տեղում, մի և նոյն միակերպ պարագաների մէջ մնալու: Որովհետև աշխատութիւնն անհրաժեշտ է մեր մարմնի և հոգու առողջութեան համար, ուստի ոչ ոք պիտի խոյս չտայ աշխատութիւնից: Ամէն ըան մարդ ձեռք է բերել աշխատութեամբ: Այն աշխատութեան շնորհիւ, որ գոյութեան կոիւ է կոչուում, մեր նախնիքն իրենց անամսնական վիճակիցն են դուքս եկել և բազմաթիւ սերունդների ջանքերով հատել են այն բարձր գրութեանը, որ ունին այժմ մարդիկ: Մարդ եւր կոչմանն արժանի լինելու համար միշտ պիտի աշխատէ թէ ֆիզիքապէս և թէ մտաւորապէս: Ամէն խելացի մարդ ուրախութեամբ աշխատում է, միայն յեմարներն են աշխատութիւնից փախչում:



ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ.

ՄԵԾ ԵՂՋԻՒՐԱԿՈՐ Ա.ՆԱ.ՍՈՒՆՆԵՐԸ.

Մեծ եղջիւրաւոր անասունների տարիքը որոշելու միջոց:—Երբ մէկը կամնում է մեծ Եղջիւրաւոր անասուններ գնել, նորա համար խիստ կարենը է իմանալ իւր գնած անասունների տարիքը: Սովորաբար Եղջիւրաւոր անասունների տարիքը որոշում են ատամների միջոցով, բայց կարելի է որոշել նաև նոցա Եղջիւրների վերայ եղած օղակներից (Եղջիւրաշերտեր, բոլորկարեր): Եթէ Եղջիւրի աճումը ամբողջ տարուայ ընթացքում կանոնաւոր կերպով է տեղի ունեցել, այն ժամանակ նորա արմատի մօտ դրսից նկատելի կլինեն օղակներ: Բայց եթէ Եղջիւրը անհաւասարաշտի մնունգ ստանայ, Եղջիւրային նիւթը կակսի անհանոն կերպով արտադրուել և միակերպ հաստութեամբ ու

լայնութեամբ օղակներ չեն ստացուի: Եղջերային նիւթի արտադրուելու վերայ ազդող շատ պատճառներ կան՝ հիւանդութիւնը, մննդի պակասութիւնը, միմեանց յաջորդող տարուայ եղանակների զգալի փոփոխութիւնները, կովերի յդութիւնը և մի քանի այլ պատճառներ:

Ցզութեան ժամանակ կովի կազմուածքի ներքին գործունէութեան մէջ զգալի փոփոխութիւններ են յառաջանում: Շոլոր մննդարար նիւթերի մեծ մասը գործ է դրւում արգանգում եղած հորթին սնուցանելու համար: Այդ ժամանակամիջոցում, ինչպէս ենթադրում են, զգալի կերպով թուլանում է եղջերային նիւթի գործունէութիւնը, որի պատճառով էլ եղջերային օղակները բարակում են: Ընդհակառակը, ծնելուց յետոյ եղջերային նիւթը սկսում է արտադրուել մեծ քանակութեամբ, որով և ստացւում են մեծ հաստութեամբ և լայնութեամբ օղակներ:

Սովորաբար մինչև երեք տարեկան հասակը այդ օղակները նկատելի չեն լինում, չորրորդ տարուանից ոկտած եղջերների մակերեսոյթի վերայ սկսում են երեան գալ փոքրիկ անհարթութիւններ՝ օղակներ, որ կարելի է տեսնել և շօշափել: Այնուհետեւ իւրաքանչիւր տարի մէկմէկ օղակ աւելանում է:

Կովի կամ եղի եղջերների վերայի օղակները համարելիս, անհրաժեշտ է ուշազբութիւն գարնել, որ մէկ կամ երկու օղակը մազերով ծածկուած չլինեն: Օրինակի համար, եթէ հաշուելուց յետոյ օղակների թիւը ընդամենը ինն է, գորա վերայ աւելացնելով երեք՝ կստանանք տասներկու, որը և համապատասխան կլինի կովի կամ եղան տարեքին: Եթէ օղակներն անկանոն կերպով են դասաւորուած և հաւասարաչափ չեն, այդ նշան է, որ կովը երկար ժամանակ չըեր (զըսրը) է մնացել, կամ վիժել է (հորթատել) և կամ հիւանդացել է: Այս վերջին դէպքում տաւարի տարեքը որոշելը նոյնքան դժուար է, որքան ծերացածներինը, երբ սովորաբար օղակները պարզ չեն լինում: Կան մարդիկ, որ մեծ եղջերաւոր անասունների այդ օղակների թիւը վարպետութեամբ պակասեցնում են, որպէս զի երանց վաճառած կովը կամ եղը երետասարդ երեայ:

Մէծ եղջերաւոր անասունների տարեքը աւելի ճիշտ որոշել կարելի է ատամներից և նրանց կերպարանափոխութիւնից: Հասակն առած եղջերաւոր անասունների ատամների թիւը 32 է: Ներքին ծնօտում կայ 8 կտրիչ և 12 սեղանատամ՝ ընդամենը 20: Վերին ծնօտում կտրիչներ չկան, նոցա տեղ բաւական հաստ, պնդացած և կոշտ բլթիկներ են լինում կաշուի վերայ,

իսկ սեղանատամներ իւրաքանչիւր կողմում 6, ընդամենը 12: Այսպիսով ատամների ընդհանուր թիւն է 32, որոնք հետևեալ պատկերն են ներկայացնում: 3. 3. 0. 0. 0. 3. 3.
 $\frac{3. 3. 0.}{3. 3. 0. 4. 4. 0. 3. 3.}$

Նորածին հորթը կարող է բոլոր 8 կտրիչներն էլ և կամ երկու երեք զոյգն ունենալ: Կարող է ունենալ նաև 12 սեղանատամ, ամէն մի ծնօտի ամէն մի կողմում երեք երեք. բայց աւելի յաճախ գոքա երեան են գալիս ծնուելուց յետոյ առաջին ամսուայ վերջերը և սովորաբար ամէն անդամ երկ-երկու: 5—6 ամսական հորթը ունենում է 8 կտրիչ և 12 սեղանատամ, միայն իւրաքանչիւր ծնօտի իւրաքանչիւր կողմում երբորդ սեղանատամի ետեւ նկատում է բլթիկ կամ ցցուածք, որից վեցերորդ ամսից յետոյ բարձրանում է 4-րդ սեղանատամը և կրկին երեք ամիս յետոյ հաւասարուում է միւս սեղանատամներին: 15 ամսական հասակում ծնօտների իւրաքանչիւր կողմում գուրս է գալիս հինգերորդ սեղանատամը: Երկու տարեկան հասակում է վերջին՝ վեցերորդ, սեղանատամը:

Այս վերոյիշեալ 1 ամսական, 6 ամսական 1^{1/4} և 2 տարեկան հասակների ժամանակ մեծ եղջիւրաւոր անասունների տարեքը հեշտ է որոշել: Բայց եթէ կամենում ենք իմանալ, թէ այս յայտնի շրջանների ժամանակամիջոցում և կամ երկու տարուց յետոյ կենդանին քանի տարեկան է, պէտք է ուշադրութիւն դարձնել ատամները մաշուելու, կաթնատամները փոխուելու և մշտական ատամներ գուրս գալու վերայ:

Առաջին ամսում գուրս եկած բոլոր ատամները՝ այն է 8 կտրիչ ատամները և 12 սեղանատամները, կոչւում են կաթնատամներ. այդ բոլոր ատամները փոխուում են և նրանց տեղը գուրս են գալիս մշտական ատամներ: Տարիքը որոշելու համար գուրս են գալիս մշտական ատամները: Տարիքը որոշելու համար ատամների փոփոխութիւնը աւելի ճիշտ միջոց է, մինչդեռ նոցա աստիճանաբար մաշուելը միայն մօտաւոր որոշում է: Այլ և այլ կովերի կամ եղների կտրիչ կաթնատամների փոխուելը միակ կերպ, միաժամանակ չէ տեղի ունենում. մէկինը վաղ, իսկ միւսինը նոյն խոկ 6 ամիս յետոյ կարող են դուրս դալ:

Այսպիսով ուրեմն եղջիւրաւոր անասունները ծնուելուց յետոյ ունենում են 8 կտրիչ ատամներ և իւրաքանչիւր ծնօտի իւրաքանչիւր կողմում առաջին կողմի երեք սեղանատամներ: Այդ կաթնատամները փոխուում են այսպէս:

Կարիչներից միջին երկուսը՝ բնակ կոչուածները, 18—20 ամսում:

Սոցա հարեւան աջ և ձախ կողմի երկուսը՝
 առաջին միջնակ • • • 2—2^{1/2} տարեկ. հաս.

Սոցա հարեւամն դէպի նեվո ընկած երկուար՝ վերա նառանացն առ
ջին միջնակ 2¹₂—3⁴ «ուժիք» 3⁴₄ տայրի երկու կտրիչները՝ կոնակ կոշտածները 3⁴₄—3⁵₄ «ուժիք»

Կտրիչ ատամների հետ միասին փոխում են և սեղանա-
տամները (կաթնատամ): 2—2¹₂ տարեկան հասակում սովորա-
բար փոխում են երկու առաջին սեղանատամները: 3-րդ տա-
րուայ վերջերը փոխում են 3-րդ սեղանատամները: Այսպիսով
ուրեմն 4-րդ տարուայ սկզբներում տաւարի ատամները իւր-
եանց կատարեալ դարգացմանն են հասնում: Ահա այս ժա-
մանակից սկսած արդէն տաւարի հասակը պէտք է որոշել
ատամների մաշուելուց, բայց ինչպէս վերևն ասացինք, այս
միջոցը այնքան էլ ճիշտ չէ, որովհետեւ կանոնաւոր ընթացք
չունի: Եթե կենդանին օ տարեկան է դառնում, բոլոր
կտրիչների ծայրերը սկսում են մաշուել և միօրինակ կամա-
րձեւ տեսք են ունենում, և նոցա միջին զոյգի մաշուած մա-
կերեոյթի վերայ նկատելի են դառնում եռանկիւնաձեւ բծեր:
Ե տարեկան և գեռ աւելի մեծ հասակում կտրիչ ատամների
պոակների եղբերում մեծ տարածութիւն է բացուում և ատամ-
ները քանի գնում աւելի մութ գոյն են ստանում, դեղնում են:
12—14 տարեկան հասակում տաւարի ատամներն այն աստիճան
հեռանում են միմեանցից, որ կենդանին մէծ դժուարութեամբ
է կարողանում նոցանով խոտ կտրել: Այդ ժամանակներում կո-
վե մէջքը կախ ընկած է լինում, կախուած է լինում նաև կովի
կուրծքը, փորն իջնում, ցածրանում է, իսկ պառեկները խիստ
ինճուտում են: Նուա հասունացող կենդանիների ատամների
փիսուելու ժամանակը այլ կերպ է: Այսպէս օրինակ, 3-րդ
սեղանատամը (կաթնատամ) մշտականի փոխում 2 տ. 9 ամս.
հասակում, իսկ մշտական կտրիչները, փոխանակ վերոյիշեալ
ժամանակներում, կարող են դուրս գալ՝ բռնակները—1 տ. 4 ամ-
սակ. հասակում, առաջին միջնակները՝ 2 տ. 1 ամս. հասակում,
երկորդ միջնակները՝ 2 տ. 9 ամս. հասակում, իսկ ծայրերինը՝
3 տ. 3 ամս. հասակում:

ամենահայտնի գործ է պահպանը յանձնել և պահպան կազմով ու աշխատավորությունով է և դա նրանունու և նախամասամբ պահ քառ չկամ ու քառ նախամաս ու քառ նախամաս է առաջ մաս ու առաջ մաս մաս մաս ու առաջ մաս ու առաջ մաս ու առաջ մաս ու առաջ մաս:

Զրի տեսակն ու կարեւորութիւնը:—թէպէտսկզբնեցում զի մասին համառօտակի խօսել ենք, բայց աչքի առաջ ունենալով, որ նա կենդանիների առողջութեան, պարարտութեան, մննդի և կաթի քանակութեան ու յատկութեան վերայ մեծ ազդեցութիւն ունի, կարեւոր ենք համարում ոյս մասին քիչ աւելի ընդարձակ տեղեկութիւններ հազոր գել:

Տարբեր կենդանիներ տարբեր քանակութեամբ զի պահանջ ունեն: Այսպէս օրինակ, խոշոր եղջիւրաւոր անասունների խմած չուրը չոր կերից 4 անգամ աւելի է: Մատադ կենդանիները ջրի աւելի մեծ կարեք ունեն, քան հասակն առած կամ ծերացած կենդանիները: Ինչպէս մարդկանց, նմանապէս և կենդանինեաց համար լաւ ջուր խմելը շատ մեծ նշանակութիւն ունի: Գործածական չուրը պէտք է 8—12% բարեխառնութիւն ունենայ: Գործածարը ցոյց են տուել, որ եղջիւրաւոր անասունների, մանաւանդ կաթնատառների, խմած ջրի բարեխառնութեան աստիճանը մեծ ազդեցութիւն է ունենում նոցա տուած կաթի քանակի և որակի վերայ: Այսպիսի փորձերից մէկի արդիւնքն այս է եղել ա) տաք ու գոլ ջուր խմող կովերից իւրաքանչիւրը միջին թուռզ մի մէ գրուանքայ կաթ աւելի է տուել. բ) ամէն մի կոլ տաք ջուր խմած ժամանակ 10 գրուանքայ աւելի է խմել, քան սառն ջուր գործածելիս. գ) տաք ջուր խմող կենդանու մարմնի մէջ կերը աւելի օգտաւէտ կերպով է գործագրւում. ամէն մէ գրուանքայ կաթի համար տաք ջուր խմող կովը պէտք է ուտէ 1,44 գրուանքայ կեր, մինչդեռ սառն ջուր խմելիս՝ 1,54 գրուանքայ:

Բոլոր անասնաբոյծները միաձայն հաստատում են, որ կենդանիների մէջ հիւանդութիւնը տարածուելու դլխաւոր պատճառը ջուրն է, վատառողջ ջուրը հետզիւտէ վնասում է նոցա գործարանները, ծանր հիւանդութիւններ է առաջ ըերում և այդպիսով արգելք դառնում կենդանու զարգացմանը:

Վնասակար ջուր համարւում են նախ և առաջ այն գետերի ջրերը, որոնց ափերի վերայ գործարաններ կան: Նաև

1. Այս զլուխը պէտք է լիներ Բ. գլխից լեզոյ, բայց սխալմամբ մնացել է եւ այստեղ է տեղաւորում:

հեշտ միջոցով կարելի է իմանալ այսպիսի ջրի վնասակար լինելը. եթէ ձուկ չկայ, նշանակում է վատառողջ ջուր է: Վնասակար են ճանաչում նաև երկար ժամանակ մի տեղում կանգնած ջրերը, որոնք երբէք չեն փոխուում, յատակին ցեխի հաստ շերտ է նստում: Այսպիսի ջրերից շատ անգամ վատ հուր է փշում: Կենդանիները երբէք այսպիսի ջրերից չեն խմում. միայն սաստիկ ծարաւացած ժամանակ, երբ լաւ ջուր չեն գրտանում, մօտենում են այդպիսի ջրերի: Այս տեսակ ջրերը վնասակար աղդեցութիւն ունենալով մարսողութեան վերայ, ամէն տեսակ հիւանդութիւնների պատճառ են դառնում: Կարելի է բացարձակապէս ասել՝ այն ջուրը, որ չի փոխուում, կամ պէտք եղածից աւելի գործարանաւոր մարմիններ և հանքային նիւթեր է պարունակում, շատ վտանգաւոր է կենդանիների առողջութեանը: Առհատարակ գործարանաւոր նիւթեր պարունակող ջուրը կունենայ իւր մէջ նաև մանրիկ կենդանիներ (միկրոֆիլ), որոնք պատճառ են դառնում ծանր և վարակիչ հիւանդութիւնների: Բայց ամէն անգամ չպէտք է կասկածել և քիչ պղտոր ջուրը անպէտք կամ վնասակար համարել. կարեւոր է միայն, որ նա յարաբերութիւն չունենայ հոտած, նեխուած նիւթերի հետ:

Ջուրը նպաստում է նաև կենդանիների գերանալուն, իսկ կերը մարսելու համար նա անհրաժեշտ է: Նկատուած է, որ առատ ջուր ունեցող արօտատեղերում արածող կենդանիները սովորաբար աւելի շուտ են գերանում, քան թէ նոքա, որոնց ժամանակ առ ժամանակ ջրելու են տանում: Նկատուած է, որ երաշտ տարիները, երբ արօտներում բոյս չի բուսնում, բայց վճիռ ջուրը առատ է լինում, կովերը որոշ չափով պարարտանում են, մինչդեռ այն տեղերը, ուր ջուրը սակաւ է կամ անառողջարար՝ նեղում, մաշլում են:

Ջրի աղդեցութիւնը ամէնից աւելի նկատելի է կաթնատու կովերի վերայ. երեք անգամ ջուր խմող կովը աւելի է կաթտալի, քան երկու անգամ խմողը: Նկատուած է նաև, որ արօտի մէջ ջրած կովն աւելի կաթ է տալիս, քան ջրելու համար հեռաւոր տեղ տարածք: Մաքուր և առատ ջուրը ոչ միայն կաթի քանակութիւնն է աւելացնում, այլ և նորա յատկութեան վերայ մէծ աղդեցութիւն է անում, որովհետեւ կաթի 7, 87⁰ ջուր է: Մաքուր ջուր խմող կովի կարագն աւելի երկար ժամանակ կպահուի անմիսա, քան թէ անառողջարար ջուր խմողինք:

Գիւղացիների պարարտականութիւնն է մաքուր պահել այն տեղը, որտեղից իւրեանց անասունները ջուր են խմում. պէտք է այնպէս պատրաստել ջուր խմելու տեղերը, որ կենդանիները

կարողանան հեշտութեամբ խմել առանց մէջը մտնելու և ջուրը պղտորելու:

Ո՛չ շատ թեթև (թեթև ջուրը լուծ է յառաջացնում) և ոչ էլ չափազանց ծանր ջուրը (ծանր ջուրը դժուարացնում է մարսողութիւնը), կարելի է լաւ համարել: Այսպիսի ջուրը իւրաքանչիւր վեդրօյի մէջ կէս մսխալ կիր է պարունակում:

Հիւթալի, ուռեցնող կերից յետոյ և կամ կենդանու տաքացած, զայրացած ժամանակ չպէտք է ջուր տալ:

9.

ԿԱԹԸ ԵՒ ՆՈՐԱՆԻՑ ՍՏԱՑՈՒԱԿ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ.

Կաթի բաղադրիչ մասերը:—Յայտնի է, թէ որպիսե տընտեսական մեծ նշանակութիւն ունի կաթը: Գործածութեան մէջ առաջին տեղը բռնում է կովի կաթը, որ ամէնից շատ է արգելաբերւում և թէ իրքն անմիջական կերակրի, թէ իրքն պանիր ու իւղ պատրաստելու նիւթ ամէն տեղ սովորական է: Ֆրանսիայի Փարիզ քաղաքում տարեկան գործ է ածւում մի միլիոն հարթւալտրից աւելի կաթ:

Թարմ և մաքուր կաթը միակերպ անթափանցիկ է և սպիտակ, առանց որ և է ուրիշ գունաւորութեան, և ունի իւրառանձին հոտն ու համը: Նորա տեսակարար կշիռը քիչ աւելի է ջրից. եթէ մի վեդրօ ջուրը կշռում է 30 գրվ., մի վեդրօ երես չքաշած թարմ կաթը կկշռէ 31 գրվ.: Կաթի բաղադրիչ մասերից ամենաթեթևը իւղն է, որ ջրից թեթև է. այդ պատճառով էլ սերը կաթի երեսն է բարձրանում, որովհետեւ իւր մէջ աւելի մեծ քանակութեամբ իւղ է պարունակում: Կաթի միւս քաղադրիչ մասերից ամենածանրն են աղերը և ապա կաթնաշաքարը: Որովհետեւ թանձը կաթը աւելի թեթև է լինում, այդ պատճառով գուցէ կշռելով կարելի լինի իմանալ, թէ արդեօք նորա երեսը քաշած է, թէ ոչ: Բայց այսպէս կշռելով մենք դժուար թէ կարողանանք ճիշտ նոլատուկին համեմ, որովհետեւ եթէ երես քաշած կաթի վերայ մի որոշ քանակութեամբ ջուր աւելացուի, նորա քաշը կհաւասարուի երես չքաշած կաթի քաշին: Կաթի տեսակների համեմատութեան և նոցա տեսակառար կշիռը որոշելու ժամանակ անհրաժեշտ է, որ ունենայ 15° ջերմութիւն:

Երես չքաշած անարատ և առողջարար ամէն տեսակ կաթ:

միշտ միևնոյն նիւթերից է կաղմուած լինում, թէպէտ տարբեր չափերով։ Կովի կաթի գլխաւոր բաղադրիչն նիւթերի միջին չափը հետեւալն է։

15^o Ա. ջերմութիւն ունեցող հարիւր մաս կաթի մէջ զըստ նուռմ է։

	միջին հաշուով	տարա- նումներ
ջուր . . .	87, 5 ^o	85—90 ^o
Պինդ նիւթեր	12, 5 »	10—15 »
որոնցից ձարակ . . .	3, 4	2,0—6,0 »
Պանդածին . . .	3, 2	2,0—4,5 »
Սպիտ . . .	0, 6	0,2—0,8 »
Կաթնաշաքար 4, 6		3,0—6,0 »
Սղեր . . .	0, 7	0,6—0,9 »

Կան կովեր, որոնց կաթի մէջ իւղային մասն աւելի է, կան և այնպիսիները, որոնց կաթը աւելի պանրածին է պարունակում։ Կաթի այդ բաղադրիչն մասերի քանակը տարբեր կովերի համար, նայած նոցացեղին և սուացած կերին, տարբեր է լինում։ Այն կաթը, որի մէջ պարագան նիւթերը չափ են, ընական նարար աւելի համեզ կլինի։

Իւղ (Կով)։—Կաթի մէջ իւղը միջին հաշուով 4^o է կաղմում, որ թէ գիւղատնտեսական և թէ կաթնատնտեսական տեսակէտից կաթի ամենաթանկագին բաղադրիչն մասն է։ Իւղը կաթի մէջ անթիւ անհամար մանրիկ գնտակիկների ձեռով է գտնուում, որոնք հասարակ աչքով անհատելի են, և միայն 200 անգամ մեծացնող լաւ խոշորացուցով երկում են իրեն մի աստեղապարդ եքինք։ Կաթի անթափանցկութեան պատճառը գիւղառապէս այդ ճարպային գնտակիկներն են, որովհետեւ դոքա իւրեանց գնտաձեռութեան պատճառով չեն թողնում, որ լոյսն անց կենաց իւրեանց զանգուածի միջով, այլ անգըադառնում են։ Ճարպային գնտակիկների մեծութիւնը տարբեր է, միայն մանրներն աւելի են քան խոշորները։ Շելլենքերգերի հետազոտութիւններին նայելով մի լիտր կաթի մէջ, որի 2,38^o եւդ է, իւղային մանրիկ գնդակիկների թիւը հասնում է մինչեւ 1.883.700.000.000 (1883,7 միլիարդ), իսկ եթէ 3,26^o—է իւղ այդ թիւը բարձրանում է 6.363,800.000 (6363,8 միլիարդ)։

Իւղը հաջում է 29—41^o ջերմութեան մէջ, միջին չափը 33^o է։ Հալուած իւղը պնդանում է հալման կէտից 10^o ցած ջերմութեան մէջ։

Պատերածին (ուզութեա)։—Սա պանրի հիմնական զանգուածն է, կաթի մեջ սովորաբար 3,2°_o է լինում և հարուստ է բորակացնեն նիւթերով։ Պանրածինը կաթի մեջ լուծուած դրութեամբ չէ, այլ ուռած հատիկների ձևով, ինչպէս օտքայի հատիկները եռացած ջրի մեջ։ Կաթի անթափանցկութեան պատճառն է նաև պանրածնի յատկութեւնը։ Այդ երկում է նորանից, որ շատ քիչ իւղ պարունակող (միայն 0,1°_o) կաթը թէպէտ երես չքաշած կաթից աւելի թափանցիկ է և ջրալի է երկում, բայց դարձեալ կատարելապէտ թափանցիկ չէ։ Պանրածինը բաղդատութեամբ նման է ձուի սպիտակուցին։ Զանազան թթուների և ստամբուային հիւթի աղդեցութեան տակ մանրիկ ուռած հատիկները մակարդուում են, զուա պատճառն այն է, որ թթուները միանում են պանրածնի մեջ եղած ջրի հետ և այդպիսով դուրս քաշում նորան այն տեղից։ ապա պանրածինը, որ միայն կը հետ միացած ժամանակ կարող էր պահել իւր ուռած հատիկների ձևը, երեան է գալիս, զաւում, նոտաւմ առանձին։ Կաթի մեջ կաթնաշաքարից քոլորովին անկախ կերպով յառաջացած կաթնաթթուն (եթէ միայն բաւական շատ է մօտաւոքալէս 0,6°_o) կարող է նպաստել կաթի մակարդուելուն։

Սպիտ կամ կ սրնային սպիտակուց (ալաբյումին ու մօլոչնայ նելօք)։—Սա կաթի մշատական բազագրիչ մասն է, և կազմում է նորա 0,6°_o թէպէտ ոմանը հաշւում են և աւելի։ Բացառութիւն է դալը, որի մեջ ըստական մեծ քանակութեամբ սպիտ կայ։ Սպիտը լուծուում է ջրի մեջ, ջրալի դարձրած թթուների և հասարակ ազի մեջ։ ընդհակառակը բորակաթթուի լուծուածքի մեջ բաժանուում, տակն է իջնում։ Նոյնը տեղի կունենայ նաև 70-75° Ռ. տաքացնելուց յետոյ։ Սպիտը բաւական նման է ձուի սպիտակուցին և պանրագործութեան մեջ այնչափ կարեորութիւն չունի։ բայց որովհետեւ տաքութիւնից մակարդուում է, ուստի դործ է ածւում կաթի շիճուկից կամ թանից մի տեսակ հասարակ սեր հանելու համար, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ չմակարդուած քիչ պանրածինի հետ խառնած սպիտ։

Կարնասաբար (մօլոչնայ սահար)։—Կաթի մշտական բազագրիչ մասն է, նորա 4,6°_o ը, և առանձին նշանակութիւն ունի սննդեան համար։ Կաթնաշաքարը մաքուր դրութեամբ կազմուում է անգոյն, թափանցիկ բիւրեղներ՝ լուծուում է 6 մաս սառն և 2½ մասն տաք ջրի մեջ և քիչ քաղցրութիւն ունի։ Անօգտարածութեան մեջ կաթնաշաքարի տեսակաբար կշռուն է 1,545։ Սոցա ամենաաչքի ընկնող յատկութիւնն է կաթնաթթուի վերածուելը, որի մի որոշ քանակութիւնը, կաթի մեջ եղած մի քանի

կլային նիւթերի հետ միանալով, մակարդումէ կաթը: Եթէ կաթի մէջ մեծ քանակութեամբ կաթնաթթու գոյացած լինի, սովորական բարեխառնութեան ներքոյ ևս կարող է կաթը թթուել, իսկ բարձր բարեխառնութեան ներքոյ նոյն երեսոյթը կարող է յառաջնել նաև աւելի քիչ կաթնաթթուն:

Կաթնաշաքարը կաթնաթթու դարձնելու պատճառը սունկերն են: այլեւայլ սաղմերից ազատ կաթի մէջ 40° բարեխառնութեան ներքոյ 24 ժամուայ ընթացքում յառաջնում են սունկեր, կաղմում են կաթնաթթու և այդպիսով մակարդում կաթը: Այդ սունկերը, որոնցից շատ կան ախոռի օգի մէջ, կաթնամանի վերայ և այլ տեղեր, ընկնելով կաթի մէջ թթու են յառաջնում և ուրիշ մանրիկ օրգանիզմների գոյութեան պատճառդառնում: Կան բակտերիաներ (մանրաճճիներ), որոնք 12° -ից ցած բարեխառնութեան մէջ չեն կարող բազմանալ, ուստի այդ դեպքում կաթնաթթու չե գոյանայ: $12-15^{\circ}$ բարեխառնութեան մէջ թէպէտ գոյանում է, բայց շատ քիչ, 20° -ից բարձր բարեխառնութեան մէջ կաթնաթթուն սկսում է արգդ զարգանալ, իսկ $32-38^{\circ}$ բարեխառնութեան մէջ համնում է արգէն իւլամենաբարձր չափին: Սորանից աւելի բարձր բարեխառնութեան մէջ բակտերիաների կենսունակութիւնը սկսում է թուլանալ, իսկ $44-45^{\circ}$ բարեխառնութեան մէջ արգէն կանգ է առնում և եթէ $45-52^{\circ}$ բարեխառնութեան մէջ ևս մակարդում է, այդ պէտք է վերագրել ուրիշ միկրօօրգանիզմների ներկայութեանը: Եթէ կաթնաշաքարը լուծենք մաքուր ջրի մէջ, օրգանիզմներն այնտեղ անկարող են զարգանալ: միայն անհրաժեշտ է, որ լուծուածքի մէջ լինեն կաթի յայանի սննդաբար մասերից: Մակարդուած կաթի մէջ ամենաշատ ($0,6^{\circ}$) կաթնաթթու գոյանում է միջակ բարեխառնութեան ներքոյ 50 ժամուայ ընթացքում:

Որովհետեւ ներկայումս յայտնի են կաթի թթուելու և մակարդուելու պատճառները, ուստի հեշտ կլինի գործադրել միքանի այնպիսի միջոցներ, որոնք կարգելեն և կամ գոնէ միառ ժամանակ կյետաձգեն այդ գործողութիւնները: Այսպէս օրինակ, կարելի է կաթը տաքացնել մինչեւ եռացման աստիճանը, որով մէջն եղած սաղմերը կոչնչանան ու այդպիսով կաթը ժամանակաւրապէս ազատ կմնայ թթուելուց: Ոմանց յաջողուել է ամենայն օր կաթը եռացնելով, պահպանել երկու ամիս շարունակ թթուելուց: Կաթը թթուելուց ազատ կարելի է պահել նաև սառեցնելով:

Աղեր կամ մոխիր (զոլա). — Կաթի այս բազարը մասերը

բաղկացած են այնպիսի նիւթերից, որոնք անհրաժեշտ են մատաղ կենդանու կազմուածքը կազմակերպելու համար և որոնք ուրեմն եղել են կովի կերի մէջ։ Այս նիւթերը կարեոր են նաև պանրագործութեան մէջ։ Տեսանք, որ կաթի $0,7^{\circ}$ աղեր են Պրովինցիալ պանրածինի հատիկների ուռածած վիճակը կարեոր է կաթի ֆիզիքական յատկութեանների համար, իսկ նա այդ դրութեան մէջ կարող է լինել այն ժամանակ միայն, եթե բաւականաչափ քանակութեամբ կեր է պարունակում իւր մէջ, ուստի և պարզ է, թէ որքան կարեոր դեր է խաղում կերը կաթի յատկութեան նկատմամբ։

Բացի վերոյիշեալ բաղադրիչ մասերից կաթի մէջ լինում են նաև մի քանի ուրեց նիւթեր, կաթնային դաղեր՝ թթուածին, ածխաթթու, բորակ և այլն։

Դալ (МОЛОЗИВО):—Ծնելուց անմիջապէս յետոյ մի քանի օքշարունակ արտադրուած կաթը, որ իւր բաղադրութեամբ զգալի կերպով տարբերում է ընական կաթից, դեղնաւուն է լինում և պղտոր, կոչւում է դալ։ Առաջ ենք բերում կովի դալի բաղադրիչ նիւթերի միջին չափը՝

Զուր	•	•	•	77,04%
Պինդ նիւթեր	•	22,96	»	
որից՝ ձարպ	•	•	3,72	»
Պանրածին	•	•	7,57	»
Սպիտ	•	•	5,45	»
Կաթնաշաքար	•	5,15	»	
Աղեր	•	•	1,07	»

Կովի ոկզբնական կաթը—դալը պարունակում է իւր մէջ մեծ քանակութեամբ դիւրամարս պինդ նիւթեր, երբեմն նոյն իսկ աղիւսակի մէջ ցոյց տուածից աւելի, մանաւանդ սպիտ և ձարպային նիւթեր, այս պատճառով և դալի տեսակարար կշեռ շատ աւելի բարձր է լինում կաթից։ Դալը նորածինների համար խիստ սննդարար և կարեոր կերպակուր է և շնորհիւ իւր մէջ եղած աղերի մեծ քանակութեան, նոյն իսկ երբեք մի տեսակ թեթև լուծողական է նոցա ստամոքսը մաքրելու համար։ Ոմանք նորածին հորթերին դալ չեն տալիս, համարելով վնասակար։ Բայց այդ կարծիքն, իհարեւ, սխալ է։

Բացի իւր տեսակարար կշռից դալը զանազանուում է սովորական կաթից նաև իւր մէջ դժոնուող առանձին տեսակ մարմնիկներով, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ կաթնային գեղձերի վանդակիկները կամ աւշային մարմնիկներ։

Եռացինելիս դալը մակաբգւում է, որովհետև նորանում մեծ քանակութեամբ սպիտ կայ. այդ չէ կարող պատահել կովե ընական կաթի հետ:

Դալի համա աղի է և քիչ թթուաշ, գոյնը գեղնաւուն, յա ճախ սուր հոս է ունենում: Եթէ դալը թողնենք հանդիստ վե ճակի մէջ երկու շերտ կլաղմէ՝ վերեկն անթափանցիկ, դեղին, և ներքելն աւելի պարզ և գեղնաւուն:

Ոժանք ենթադրում են, որ դալը իւր մէջ մեծ քանակութեամբ իւղ է պարունակում: Որովհետև հանդիստ վիճակի մէջ իրեւ թէ շատ սեր է ըսնում: ոսքա համար աւելացնում են կաթի վերայ, որպէսզի մեծ քանակութեամբ իւղ ստացուի: Այս ենթադրութիւնը սիսալ է՝ ինչպէս տեսանք դալի մէջ քիչ իւղ կայ և նա մնառում է իւղ և պանիք պատրաստելուն: Մաքուր գալից կարելի է, իհարկէ, իւղ պատրաստել, եթէ հետը ջուր խառնենք: Կաթը դալի հետ խառնուելով կապականուի, աւելի տարածական և մեզմածոր կդառնայ, իւղը դժուարութեամբ կարտադրուի և ստացածն էլ (իւղը) շատ անդամ զգուելի համ և հոտ կունենայ: Եթէ կաթի հետ դալ կայ խառն, այդպիսի կաթից պանիք պատրաստելիս պանրածինի մակարդուելը և պանիքի հասունանալը անկանոն կերպով տեղի կունենան: Ահա այս է պատճառը, որ դալը երբէք չպէտք է խառնել կաթի հետ, կամ պէտք է առանձին գործ գնել, գոնէ մինչեւ առաջին շաբաթը և կամ պէտք է ուղղակի գորանով կերպակը հորթերին և խոզերին: Այն տեղերում, որտեղ երես չքաշած կաթից թանկագին պանիքներ են պատրաստում՝ նոյն իսկ ծնելուց յետոյ երկու շաբաթ շարունակ կթած կաթը չեն գործ գնում: Հակառակ դէպքում ամենափր քանակութեամբ դալն անդամ կարող է փչացնել ամենաթանկագին պանիքը:

Ծնելուց 3—14 օր յետոյ արտադրուում է աւելի ջրալի և ընական կաթ, որից և կարելի է պատրաստել իւղ և պանիք:

Գ. Գ.



Ենթադրութիւնը այս պահի գործունեան մեջ ազատ պատճենառ պահի պատճենառ անհամապատճեն է և այս պահի գործունեան մեջ ազատ պատճենառ պահի պատճենառ է: